ՀՏԴ: 398(82)

DOI: 10.54503/0135-0536-2025.3-200

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱՆ «ՍԵՎ» ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ*

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ հնդեվրոպական պատանեական եղբայրություններ, հնդեվրոպական առասպելաբանություն, հնդեվրոպական անվանաբանություն, հայ վիպական բանահյուսություն, Արմավիր, Ռոմովե, Հռոմ:

Ամփոփում

Հնդեվրոպաբանության մեջ վերականգնվում է պատանի ռազմիկների եղբայրությունների ինստիտուտը: Նրանք, ավագ առաջնորդների ղեկավարությամբ, որսորդությամբ և ավազակությամբ մի քանի տարի ապրում էին ցեղի տարածքի ծայրամասերում: Միայն դրանից հետո, նվիրագործության ծեսն անցնելով, պատանիները կարող էին դառնալ ցեղի լիիրավ անդամներ, ամուսնանալ և ունենալ իրենց սեփականությունը: Այդ եղբայրությունները կարևոր դեր են կատարել Եվրասիայում հնդեվրոպացիների տարածման գործում: Նրանց ասպատակությունները և նվաճումները հանգեցրել են նոր բնակավայրերի հիմնադրմանը և այդտեղ իրենց ցեղի մարդկանց նոր խմբերի վերաբնակեցմանը: Եղբայրությունների տարբերակիչ առանձնահատկությունը նրանց կապն էր սև/մուգ գույնի հետ: Եվ որոշ ավանդույթներում իրենք՝ պատանիները և նրանց դիցաբանական անձնավորումները կարող էին կոչվել ուղղակի հնդեվրոպական $*h_2reh_1mo$- *«սև, մուգ գույն» արմատով: Հայտնի են երկվորյակային կերպարների կողմից նոր քաղաքների հիմնադրման հնդեվրոպական մի շարք լեգենդներ, որտեղ նրանք հանդես են գալիս որպես այդ եղբայրությունների դիցաբանական անձնավորումներ, իսկ քաղաքները կարող են կոչվել «սև» կամ այս կամ այն կերպ կապված լինել «սևի» հետ (Արմավիր, Սասուն, Հռոմ և այլն): Այդ առասպելույթի տարածվածությունը կարող է վկայել նրա համահնդեվրոպական ընույթը (թերևս բացառությամբ անատոլիական ավանդույթի):*

Նախաբան

Հնդեվրոպական համեմատական առասպելաբանությունն ուսումնասիրում է հնդեվրոպական ժողովուրդների առասպելները՝ դրանց համեմատության և վերլուծության միջոցով պարզելով հին հնդեվրոպացիների դիցաբանական և

---

* *Ներկայացվել է 07. IX. 2025 թ., գրախոսվել է 31. X. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:*

© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

կրոնական պատկերացումները, աշխարհայացքը և այլն: Բայց հին առասպելներն ու լեգենդները, լեզվական փաստերի համադրությամբ, հնարավորություն են տալիս ուսումնասիրել նաև այլ երևույթներ, այդ թվում՝ դրանց ազգագրությունը՝ հասարակության կառուցվածքը, սոցիալական խմբերը և այլն: Եղած նյութը թույլ է տվել պարզել, որ մինչև հասարակության լիիրավ անդամ դառնալը պատանիները որոշակի ժամանակ պետք է լինեին որսորդ-ռազմիկների եղբայրության անդամներ և ապա նոր՝ նվիրագործության ծեսն անցնելուց հետո, դառնային ցեղի լիարժեք անդամներ: Այդ եղբայրություններն էական դեր են կատարել հնդեվրոպացիների կյանքում և իրենց հետքերը թողել տարբեր ժողովուրդների առասպելներում: Հատկապես ուշագրավ են եղբայրություններն անձնավորող երկվորյակային տիպի հերոսների կողմից նոր քաղաքների հիմնման լեգենդները, որոնց համադրությունը թույլ է տալիս հասնել համահնդեվրոպական վերակազմության: Ընդհանրապես, հնդեվրոպական առասպելաբանության ուսումնասիրություններում հայկական նյութը չափազանց քիչ է օգտագործվում: Սա բացառիկ է այն իմաստով, որ լավագույն և ամենահարուստ նյութը տալիս է հայ վիպական ավանդույթը (ազգածին ավանդություն, «Վիպասանք», «Տարոնի պատերազմ», «Սասնա ծռեր»):

Հնդեվրոպական պատանեական եղբայրությունները

Հնդեվրոպաբանության մեջ վերականգնվում է *koryos *տերմինը, որով կոչվում էին միմյանց և իրենց աստծու հետ երդմամբ կապված պատանի ռազմիկների եղբայրությունները: Եղբայրության անդամները, ավագ առաջնորդ-դաստիարակների ղեկավարությամբ, որսորդությամբ ու թալանով, հաճախ գայլի վարքագիծն ընդօրինակելով, մի քանի տարի ապրում էին ցեղի տարածքի ծայրամասերում՝ հաճախ անտառներում: Դրանից հետո միայն, նվիրագործության ծեսն անցնելով, նրանք կարող էին դառնալ ցեղի լիիրավ անդամներ, ունենալ սեփականություն և ամուսնանալ: Ի տարբերություն հասուն զինվորների, նրանք կռվում էին մերկ կամ կենդանիների մորթով ծածկված, թեթև զինված և հաճախ գիշերը: Առասպելներում նրանք բնութագրվում են մեծ ուժով, ցավի նկատմամբ անտարբերությամբ ու վախի բացակայությամբ: Մարտի մեջ նրանց պատում էր վայրի, գայլային կատաղությունը, որն իբր մեծացնում էր նրանց բնական ուժը[1]:*

Այդ եղբայրությունների դիցաբանական արտացոլումներն են, օրինակ, ռուդրաները և մարուտները՝ հնդկական աստվածներ Ռուդրայի ու Ինդրայի հետևորդները, էյնհերիները՝ սկանդինավյան Օդին աստծու բանակը, ֆիանան՝ իռլանդացի հերոս Ֆիննի որսորդ-զինվորների խումբը և այլն[2]: Պատանի ռազմիկների դիցաբանական առաջնորդը ռազմի աստված էր, որը երբեմն նույնացվել է ամպրոպի աստծու հետ: Այդպիսի աստվածներ էին, օրինակ, հնդկական

---

[1] *Այս եղբայրությունների մասին տե՛ս* McCone. 1987; Sergent. 2003, 16–19; Lincoln. 1991, 131; Mallory, Adams. 1997, 6–7, 531, 632–633; Kershaw. 2000; Mallory. 2007. *Տե՛ս նաև* Kórios *հոդվածն անգլերեն Վիքիպեդիայում: Սկանդինավյան բերսերկների և նմանատիպ հնդեվրոպական «խենթ/կատաղի» ռազմիկների վերաբերյալ տե՛ս* Speidel. 2002.

[2] *Տե՛ս* Puhvel. 1987, 242.

Ինդրան և Ռուդրան, իրանական Միթրան, հունական Ապոլոնը, լատինական Մարսը, արևմտասլավոնական Սվանտովիտը, գերմանասկանդինավյան Վոդան/Օդինը[3]*: Եղբայրություններին կարևոր դեր է հատկացվում Եվրասիայով մեկ հնդեվրոպացիների տարածման գործում: Նրանց ասպատակություններն ու նվաճումները հանգեցրել են նոր բնակավայրերի հիմնման, ապա ցեղերի ավելի մեծ խմբերի, այդ թվում՝ մեծահասակների, կանանց և երեխաների վերաբնակեցման*[4]*:*

Եղբայրություններին բնորոշ էր կապը սև/մուգ գույնի հետ և որսորդությունն ու ռազմական գործողությունները գիշերային խավարում[5]*: Այսպես՝ ավեստական էֆեբոսները (պատանիները) սև թիկնոց էին կրում և նրանց, ի տարբերություն չափահաս ռազմիկների, հատուկ էին գիշերային որսորդությունն ու ռազմական գործողությունները*[6]*: Հին հնդկական Ինդրան և Ռուդրան՝ եղբայրությունների հովանավոր աստվածները, կրում էին սև հագուստներ*[7]*: Տակիտոսի հիշատակած գերմանական հարիները* (Harii)*, որոնք մարտի էին գնում գիշերը՝ ներկված մարմիններով ու սև վահաններով, հավանաբար, եղել են լուգի ցեղի պատանի ռազմիկները*[8]*: Կորյոսի և սևի/մթության այս կապը հանդես է գալիս հին Իրանում, Հայաստանում, Սկյութիայում, Թրակիայում, Գերմանիայում, Իռլանդիայում, Բրետանում: Եղբայրության դիցաբանական առաջնորդը, ինչպես նաև զինվորները, կարող էին պարզապես կոչվել «սև». օրինակ, կորյոսի աստվածներից հնդկական Կրիշնայի անունը նշանակում է ուղղակի «սև»*[9] *(իսկ հայոց «սև» Արամի և «թուխ մանուկների» մասին տե՛ս ստորև): Հունական ավանդույթում սև ու սպիտակ հերոսների հակադրությունը և հերթագայությունը արտացոլում են պատանի և հասուն ռազմիկների հարաբերությունները*[10]*, ինչը, այսպես թե այնպես, հատուկ պիտի լիներ նաև մյուս հնդեվրական ցեղերին:*

Պատանի ռազմիկների մյուս առանձնահատկությունը նրանց հատուկ սանրվածքն էր՝ մազափունջը կամ մազերի հյուսքերը[11]*: Այդպես էին պատկերացվում նաև նրանց դիցաբանական անձնավորումները՝ հնդկական Ինդրան, Ռուդրան և Կրիշնան, հունական էֆեբոսների առաջնորդ Թեսևսը, իրանական հերոս Կրրըսասպան, հայկական Գիսանեն և նրա հետևորդները:*

Երիտասարդական եղբայրությունների արտացոլումները հայկական բանահյուսության մեջ

Հայոց նախաքրիստոնեական կրոնի ամպրոպի և ռազմի աստվածն էր Վահագնը: Ագաթանգեղոսի պատմության մեջ Տրդատ թագավորի խոսքում

---

[3] Kershaw. 2000, 182–192.

[4] *Տե՛ս* Kershaw. 2000, 172–174; Sergent. 2003, 23.

[5] Vidal-Naquet. 1986; Sergent. 2003, 17; Mallory. 2007, 94; Petrosyan. 2011.

[6] Vidal-Naquet. 1986.

[7] Kershaw. 2000; Petrosyan. 2011, 345.

[8] Kershaw. 2000, 42–43.

[9] *Այս առումով տե՛ս* Васильков. 2019, 141.

[10] Vidal-Naquet. 1986, 112; Petrosyan. 2002, 43–77.

[11] Kershaw. 2000, 48–50.

ասվում է. «… և քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ»[12]: Այսպիսով՝ քաջ «արի/խիզախ, քաջ մարդ» բառը Վահագնի մակդիրն էր: Բայց քաջերը միայն քաջ ռազմիկները չէին. այդպես էր կոչվում նաև դիցաբանական էակների մի ամբողջ դաս (ժամանակակից հայերեն՝ քաջք): Ամենամեծ քաջը՝ Վահագնը, որն իր հիմնում ծնվում է որպես պատանեկիկ, հենց պատանեկան եղբայրության քաջ ռազմիկների աստվածային անձնավորումն էր ու առաջնորդը, ինչպես, ասենք, Ինդրան ու Ռուդրան էին մարուտների ու ռուդրաների համար[13]:

Հայկական ավանդական պատկերացումներում գայլը ոչ միայն կենդանի է, այլև երկոտանի դև: Նրա թաթերը շրջված են հետ, ինչպես քաջքերինը, նա, ինչպես քաջքերը, ծնվում է անձրևի ժամանակ՝ արևոտ եղանակին, և կայծակը, բոլոր չարքերի ու դևերի հետ, ոչնչացնում է նաև գայլերին[14]: Այսպիսով՝ կարելի է ասել, որ քաջքերը, որոնք ծնվում, ապրում ու մեռնում են գայլերի պես, համընկնում են պատանի «գայլային» ռազմիկի կերպարի հետ: Իսկ որ Վահագնը նման «գայլերի» եղբայրության առաջնորդն էր, վկայում է VIII դարի հայ պատմիչ Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» մեծ հերոս, զորավար Գայլ Վահանի կերպարը, որի անունը հենց Վահագնի ձևափոխություններից մեկն է[15]:

Հայ բանահյուսության մեջ հայտնի է թուխ մանուկի կերպարը: Այդ անունով են կոչվել բազմաթիվ քրիստոնեական ուխտավայրեր՝ մատուռներ կամ գերեզմաններ հիշեցնող կառույցներ[16], սակայն թուխ մանուկները, ինչպես քաջքերը, ժողովրդական բանահյուսության մեջ երբեմն հանդես են գալիս որպես ոգիներ, ինչը ցույց է տալիս, որ նրանք ծագում են հեթանոսական ժամանակներից[17]: Հայերենում թուխ նշանակում է «սև, մուգ գույն», իսկ մանուկ՝ «տղա, պատանի, ռազմիկ»: Այսպիսով՝ միայն անունով իսկ նրանք արդեն համեմատելի են պատանեկան եղբայրությունների անդամների հետ: Եվ այս կերպարի առաջին հետազոտողը՝ Ա. Մնացականյանը, դրանք արդեն համարել է պատանեկան այդ եղբայրությունների հիշողություն, որի արձագանքները Հայաստանում պահպանվել էին մինչև միջնադար[18]: Ի դեպ, օսերենում էլ կա այդ անվան համարժեքը՝ sau læppu *«սև տղա/պատանի», որոնց կերպարը համեմատվում է ռուսական բանահյուսության* добрый молодец *«բարի պատանի/երիտասարդ, կտրիճի» հետ[19]: Կարևոր է նշել, որ բանահյուսության մեջ թուխ մանուկները հաճախ հանդես են գալիս որպես երկվորյակներ[20]: Ակնհայտ է, որ պատանեկան եղբայրությունը հեշտությամբ կարող է անձնավորվել երկվորյակների կերպարներով:*

---

[12] *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. 1983, 8:*

[13] *Քաջքերի և Վահագնի՝ որպես նրանց առաջնորդի մասին տե՛ս* Petrosyan. 2018.

[14] *Ա բ ե ղ յ ա ն. 1975, 87, 89, 92:*

[15] *Ա ճ ա ռ յ ա ն 1962, 9,* Schmitt. 1984, 322–323.

[16] *Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1976:*

[17] *Ա լ ի շ ա ն. 1895, 217, Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1976, 191.*

[18] *Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1976, 193–195:*

[19] Абаев. 1979, 42–43, 96–47.

[20] *Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2000, 353–355:*

Հայ վիպական հերոսները պատանեկան եղբայրության անդամներ

«Ազգածին ավանդություն»: *Արամ նահապետը, իր հիսուն հազարանոց նորատի (դեռատի, նորահասակ, ջահել) ռազմիկներով, բոլոր կողմերից ընդլայնում է Հայաստանի սահմանները*[21]: *Հիշատակվում են նրա հաղթանակները Մարաստանում, Ասորեստանում և Կապադովկիայում: Ազգածին ավանդությունը, լինելով հնդեվրոպական առասպելաբանության մի վառ դրսևորում, եզակի է այն բանով, որ նրանում, ի տարբերություն հնդեվրոպական այլ առասպելների ու էպոսների, հակառակորդ առաջնորդները գործառութային առումով*[22] *համապատասխանում են իրար (այսպես՝ Հայկը և Բելը, որոնք իշխում են և ոչ ոքի չեն ենթարկվում, տիրակալության գործառույթի կրողներ են, Արամը և Բարշամը՝ ռազմական, իսկ Արա Գեղեցիկն ու Շամիրամը՝ սիրո և պտղաբերության կերպարներ են)*[23]: *Ընդ որում՝ Արամի առաջին հակառակորդ մեղացիների առաջնորդը, ինչպես և երկրորդը՝ Բարշամը, նույնպես ռազմիկ էր ու հիշվում է որպես «պատերազմասեր», նրա բանակը, ինչպես և Արամինը, կազմված էր երիտասարդ ռազմիկներից, և Արամը հաղթում է նրանց արևածագից առաջ, այսինքն՝ գիշերվա խավարում*[24]: *Այսպիսով՝ բախումը ներկայանում է որպես մի գիշերային մարտ պատանի ռազմիկների երկու թշնամական եղբայրությունների միջև: Անանիա Շիրակացու (VII դար) փոխանցած ավանդության համաձայն՝ հայերի նախնի Վահագնը մի անգամ դաժան ճմռանը ծղոտ է գողանում ասորիների նախնուց՝ Բարշամից, ինչի արդյունքում առաջանում է Ծիր Կաթինը կամ հայերեն՝ «Հարդագողի ճանապարհը»*[25]: *Վահագնը հեթանոս աստված է, ոչ թե հայերի նախնին, իսկ Բարշամն ազգածին առասպելում հանդես է գալիս որպես ասորիների առաջնորդ, որը սպանվում է Արամի հետ կռվում և ասորիների կողմից աստվածացվում իր քաջագործությունների համար (Բարշամ ձևը աղավաղումն է արևմտասեմական Բաալշամին՝ «երկնքի տիրակալ» դիցանվան, որով սկզբնապես կոչել են ամպրոպի աստված Հադադին)*[26]: *Ակնհայտ է, որ լեգենդում Վահագնը փոխարինել է Արամ նահապետին, ինչը կրկին*

---

[21] *Խ ո ր ե ն ա ց ի. 1991, 42–44:*

[22] *Ըստ նոր համեմատական առասպելաբանության հիմնադիր Ժ. Դյումեզիլի՝ հնդեվրոպական առասպելաբանությունը ձևավորված է երեք հիմնական՝ տիրակալության, ռազմական և պտղաբերության գործառույթների շուրջ: Այս «եռամաս գաղափարախոսությունը», անվերջանալիորեն կրկնվելով, ի հայտ է գալիս աստվածների և հերոսների համակարգերում, կերպարներում, նրանց հերթագայության մեջ, առասպելներում, էպոսներում, զոհաբերություններում, օրհնանքներում, անեծքներում, երկնային ու երկրային գոտիների, հասարակության դասակարգումներում և այլուր: Դա, ըստ հեղինակի, հնդեվրոպական մշակույթներին բնորոշ, առանձնահատուկ հատկանիշն է՝ կապված հասարակության եռամաս դասային կառուցվածքի հետ (տե՛ս, օրինակ,* Dumézil. 1992, *հատկապես՝ էջ 81–115): Մեր նպատակներից դուրս է այդ տեսության վերաբերյալ թեր և դեմ կարծիքները ներկայացնելը: Անկախ ամեն ինչից, Դյումեզիլի ու նրա հետևորդների ներկայացրած հսկայական նյութը կասկածից վեր է դարձնում դրա, առնվազն որպես քննության մեթոդ, կիրառելիությունը:*

[23] Ahyan. 1982.

[24] *Խ ո ր ե ն ա ց ի. 1991, 42–44:*

[25] *Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. 1969, 7:*

[26] Healey. 2001, 124.

ցույց է տալիս, որ Արամը ամպրոպի աստծու էպիկական փոխակերպումն էր, ինչպես և իր հակառակորդ Բարշամը:

«Տարոնի պատերազմը»: *Պատանի ռազմիկների և նրանց ջոկատների հիշողությունն առավել ցայտուն է երևում Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» մեջ*[27]*: Ըստ ավանդության՝ հայոց թագավորը Տարոն գավառի իշխանությունը տալիս է Հնդկաստանից եկած Գիսանե և Դեմետր եղբայրներին: Գիսանե անունը բացատրվում է որպես «գէս (երկար մազեր, մազափունջ, մազերի հյուսք) ունեցող», իսկ եղբայրների ու նրանց հետևորդների մասին ասվում է որ նրանք «սեւք էին եւ գիսաւորք եւ զազրատեսիլք, զի ցեղով ի Հնդկաց էին»*[28]*: Նրանց սերունդների շրջանում ընդունված էր տղաների գլխին թողնել միայն ճակատի խոպոպը կամ հյուսքը, որը, ինչպես ասվեց, հնդեվրոպական պատանի ռազմիկների բնորոշ հատկանիշն էր: Ընդ որում՝ այդ գեսը, ըստ սովորության, կրել են բոլոր հայ պատանիները*[29]*: Եվ որքան էլ շեշտվի, որ Գիսանեն, Դեմետրը և նրանց ուղեկիցները հնդիկներ էին, իրականում սա հնագույն՝ մոռացված հնդեվրոպական իրողությունների մի հիշողություն է: Իսկ Սուրբ Կարապետը (այսինքն՝ Հովհաննես Մկրտիչը) այս երկում հայոց բանակի երկնային առաջնորդն է, ամպրոպային Վահագնի քրիստոնեական ժառանգը, և ներկայացվում է որպես «այր մի գիսաւոր ընդ ամպս որոտացեալ»*[30] *(ինչից հետևում է, որ Վահագնը ինքն էլ գիսավոր է պատկերացվել):*

«Սասնա ծռեր»: *Կարելի է ասել, որ այս էպոսի մեծ հերոսները պատանի ռազմիկների եղբայրության անդամների վիպական ժառանգներ են*[31]*: Այսպես՝ իրենց գրեթե բոլոր սխրանքները նրանք կատարում են մանկության կամ պատանեկության շրջանում: Հերոսների կենսագրությունը, փաստորեն, հանգեցվում է այդ տարիներին և ավարտվում ամուսնությամբ ու որդու ծննդով, որից հետո հերոսին մնում է մեռնել կամ զոհվել իր վերջին մարտում (այսինքն՝ երբ հերոսն անցնում է հաջորդ սոցիալական դաս, էպոսը, փաստորեն, կորցնում է հետաքրքրությունը նրա նկատմամբ): Հերոսի զինակիցները, եթե այդպիսիք առկա են, չհասունացած պատանիներ են: Հերոսը (Դավիթը կամ Փոքր Մհերը) զվարճանում ու նռան գինի է խմում 40 չամուսնացած տղաների և 40 չամուսնացած աղջիկների հետ: Գլխավոր հերոսների բոլոր սերունդների մշտական խորհրդատուն՝ քեռի Թորոսը, համեմատելի է* koryos*-ի դաստիարակի կերպարի հետ: Հերոսների ծուռ «խենթ, կտրիճ» մակդիրը կարող է բնորոշել նրանց խենթ մոլեգնության հասնելու ունակությունը, որը վանում է մահվան վախը և հաղթանակ ապահովում մարտում*[32]*:*

Ար(ա)մ- տարրը ազգածին ավանդության մեջ

Ազգածին ավանդությունը պատմություն է հայոց առասպելական նախնի Հայկի և նրա ժառանգների յոթ սերունդների մասին, որոնք, ըստ առասպելի

[27] *Հարությունյան. 2000, 121–131:*
[28] *Յովհան Մամիկոնեան. 1941, 107:*
[29] *Փավստոս Բուզանդ. Ե, խգ, տե՛ս Հարությունյան. 2000, 125:*
[30] *Հարությունյան. 2000, 121–123, 141–144:*
[31] Васильков. 2019, 141–144.
[32] Васильков. 2019, 143–144.

տերմինաբանության, կոչվում են «արք ազգածինք»: Հայերի հայ ինքնանվանումը համարվում է ծագած Հայկի անունից: Ըստ պատմահայր Խորենացու[33]՝ արմեն և նման ցեղանունները, որով մյուս ժողովուրդները կոչում են հայերին, ծագում է Հայկից հետո յոթերորդ նահապետի՝ Արամի անունից (որը, ինչպես վայել է koryos*-ի իսկական առաջնորդին, բոլոր կողմերից ընդարձակում է Հայաստանի սահմանները և այդպիսով ստեղծում մի նոր Հայաստան), իսկ ըստ հայոց «նախնական պատմության»՝ հայտնի Սեբեոսի գրքից, Հայկի որդի Արամանյակի անունից[34]: Ինչևէ, չորս նահապետների՝ Արամանեակի, Արամայիսի (այս անունները հաղորդվում են նաև Արմանեակ/Արմէնակ ու Արմայիս ձևերով), Հարմայի և Արամի անունները պարունակում են ար(ա)մ- տարրը: Կարելի է ենթադրել, որ այդ տարրով սկզբնապես կոչվել է հնագույն հայերի մի ենթաէթնիկ խումբ, որը նշանակալի դեր է խաղացել հայ ժողովրդի ձևավորման մեջ:*

Ազգածին առասպելի գլխավոր հերոսները՝ Հայկը, Արամը և Արա Գեղեցիկը, ծագում են հայոց հնագույն աստվածների կերպարներից[35]: Հայկը վիպական փոխակերպումն է դիցարանի գլխավոր աստծու՝ աստվածների ընտանիքի նահապետի, Արամը՝ ավանդության միակ ռազմատենչ կերպարը՝ ռազմի, իսկ նրա որդի Արա Գեղեցիկը՝ մեռնող և հառնող աստծու: Հաշվի առնելով Արամի՝ նորատի ռազմիկների առաջնորդի կերպարը՝ պետք է կարծել, որ նա, ինչպես հնդեվրոպական որոշ նման կերպարներ, համատեղում էր ամպրոպի աստծու և պատանի ռազմիկների եղբայրության առաջնորդի գործառույթները: Հնդեվրոպական համատեքստում Արամի անվան լավագույն համապատասխանությունները Ռամա անունով հնդկական հերոսներն են և հատկապես նրանցից առաջինը՝ Պարաշուրաման՝ «Կացնով Ռաման»[36]: Ռամա (Rāma) *անունը ստուգաբանվում է հնդեվրոպական* $*h_2reh_1mo-$ *«սև, թուխ» արմատով[37]: Այդ ստուգաբանությունը հաստատվում է այդ Ռամայի՝ Արջունա անունով հերոսի նկատմամբ տարած հաղթանակի առասպելով (*Arjuna, *հնդեվրոպական* $*h_2erg'-$ *«սպիտակ, փայլուն» արմատից)[38]:* $*H_2reh_1mo-$ *և* $*h_2erg'-$ *արմատներով կազմված այս առասպելությունը աշխարհի ժողովուրդների առասպելներում և էպոսներում լայնորեն տարածված «սևի ու սպիտակի» թեմայի դրսևորումներից մեկն է[39]: Կա նաև կարևոր նմանություն մեկ այլ Ռամայի՝ «Ռամայանա» էպոսի հերոսի ու Արամի միջև: Այս Ռաման, ինչպես Արամը, ամպրոպի աստծու էպիկական փոխակերպումն է[40]: Նրա վտարումը իր երկրից ու երկվորյակ եղբոր և կապիկների ու արջերի անհամար բանակի հետ Լանկան նվաճելու նրա հեռավոր արշավանքը հիշեցնում են պատանեկան եղբայրությունների ռազմական արկածները (որի անդամները երբեմն կրում էին գազանների, այդ թվում՝ արջի մորթի,*

---

[33] *Խորենացի. 1991, 42:*

[34] *Մանրամասն տե՛ս Սարգսյան. 1998, 123:*

[35] *Պետրոսյան. 2020, 38–42:*

[36] Petrosyan. 2002, 44–45.

[37] Mayrhofer. 1996, 449.

[38] Puhvel. 1987, 90.

[39] Petrosyan. 2002, 43–77, 107–115.

[40] Puhvel. 1987, 92–93.

հմմտ. սկանդինավյան բերսերկների անվան «արջի մորթի հագած» մեկնաբանությունը) և կարող են ակնարկել նրա առասպելում համապատասխան ենթաշերտի գոյությունը: Յ. Վասիլկովի հաղորդման համաձայն՝ այդ մասին կարող է վկայել նաև Շրի Լանկայի նվաճման զուգահեռ պատմությունը, որի հերոսը Վիջայան է՝ իր պատանեկան ջոկատով[41]:

«Սև ու սպիտակի» թեման Արամի պատմության մեջ: *Արամի երրորդ և վերջին՝ դիցաբանորեն ամենանշանակալի հաղթանակը տեղայնացվում է Կապադովկիայում՝ Արգեոս լեռան շրջանում (հունարեն՝* Argaios/Argeos, *ներկայիս թուրք.* Erciyes*), որտեղ Արամի տոհմակից Մշակը կառուցում է Մաժաք քաղաքը (հետագայում՝ Կեսարիա)[42]: Այն Փոքր Ասիայի ամենաբարձր և ամենապաշտելի լեռն էր, առասպելների ու լեգենդների հզոր կենտրոն, որը դեռևս խեթական ժամանակներում կապված էր ամպրոպի աստծու հետ և հայտնի էր որպես* Ḫarga *(հնդեվրոպական* $*h_2erg'$- *«սպիտակ» արմատից)[43]: «Սևի ու սպիտակի» առասպելի համատեքստում այդպես կարող էր կոչվել ամպրոպի աստծու հակառակորդը: Լեռն իր տեղում զոհված դիցաբանական կերպարի անունով կոչելու համար հմմտ., օրինակ, Նեմրութ (= Նեբրովթ) և Արա լեռնանունները՝ կոչված իբր այդ վայրերում սպանված կերպարների անուններով[44]: Արամի այս հաղթանակի առասպելը Յ. Մարկվարտը համեմատում է Զևսի և Տիփոնի մենամարտի հետ, որը տեղի է ունեցել «Արիմքում» (Իլիականում՝* ein Arimois *«Արիմներում»)[45]: Հաշվի առնելով, որ Արգեոսը համարվել է այդ մենամարտի հնարավոր տեղայնացումներից մեկը, նա Արամին համադրել է ամպրոպային Զևսի, իսկ արիմներին նույնացրել վաղնջահայերի հետ[46]: Արիմքը համարվել է այրված, հրաբխային մի վայր, որտեղ շանթարձակ Զևսը կայծակնահարել է Տիփոնին և նրա շուրջը գտնվող երկիրը: Այն տեղայնացվել է բազմաթիվ վայրերում, այդ թվում՝ Փոքր Ասիայի մի սև, այրված երկրամասում, որտեղ մի ժամանակ իբր իշխել է լեգենդար Արիմուս արքան[47]:*

«Սևի ու սպիտակի առասպելի» մեկ այլ դրսևորում է խուռիական ամպրոպի աստված Թեշուբի և Արծաթ աստվածության մենամարտի առասպելը[48], ընդ որում՝ այս աստծու անունը ծագում է $*h_2erg'$- *արմատից[49]: Եվ քանի որ Արգեոս լեռը վաղնջական ժամանակներից կապված է եղել ամպրոպի աստծու հետ, հնարավոր է, որ հենց այնտեղ է եղել նրա և Արծաթի կռվի տեղայնացումներից մեկը:*

Այս առասպելի անունները հետքեր են թողել նաև Ուրարտուի վաղ շրջանի անվանաբանության վրա: Այսպես՝ ուրարտական առաջին արքայի Արամու

---

[41] Vassilkov. 2015, 242–243.

[42] Markwart. 1928, 216–217; Petrosyan. 2002, 43–44.

[43] Laroche. 1985, 88–89.

[44] *Ղանալանյան. 1969, 166–167:*

[45] *Հոմերոս. 1955, 73:*

[46] Markwart. 1928, 215–217.

[47] Страбон. 1964, 588–589. *Արիմների տեղայնացումների վերաբերյալ տե՛ս* Vian. 1960, 19–24.

[48] Petrosyan. 2002, 46–50.

[49] Hoffner. 1988, 163; Puhvel. 1991, 242; *հմմտ. նույնարմատ հայ. արծաթ, լատ.* argentum *բառերը:*

*անունը համեմատելի է Արամ նահապետի անվան հետ (հնագույն հայ. *Արամո, սեպագրում նշաններ չկան օ-ի համար և այն հաղորդվում է որպես ու), ընդ որում՝ և՛ առասպելական Արամը, և՛ պատմական Արամուն ժամանակագրվում են որպես Ասորեստանի Շամիրամ թագուհու (իշխել է մ. թ. ա. IX դ. վերջին տասնամյակում) ավագ ժամանակակիցներ: Ակնհայտ է, որ առասպելական Արամի կերպարը յուրացրել է պատմական Արամու արքայի հատկանիշները, որն ինքը, հավանաբար, կոչվել է հնագույն հայոց ամպրոպի աստծու՝* *koryos-*ի առաջնորդի «սև» մակդիրով: Արամուի արքայական քաղաքը* Arṣašku(n)-*ն էր, հավանաբար, հետագա հայ. Արճեշը* (< *$h_2$erg'-)*՝ Վանա լճի հյուսիսում, այն շրջանում, որտեղից, ըստ առասպելի, Հայկի որդի Ար(ա)մանեակը և նրա տոհմը տեղափոխվել են Արարատյան դաշտ[50]: Պատմական և դիցաբանական անունների միջև այս կապը պետք է բացատրվի մարդկանց և աշխարհագրական օբյեկտները առասպելաբանական անուններով կոչելու սովորությամբ (հմմտ. Հռոմի հիմնադրման առասպելում հայկականի հետ նույնարմատ հնդեվրոպական անվանումների գոյությունը՝ երկվորյակները լքում են իրենց հայրենի «սպիտակ» քաղաքը և նոր վայրում կառուցում իրենց «սև» քաղաքը):*

Հնդեվրոպական *$h_2$re$h_1$mo-*ի կանոնավոր արտացոլումը հայերենում կլինի արիմ-, իսկ դրա* *$h_2$ro$h_1$mo- *և* *h_2r$h_1$mo *ձայնդարձային տարբերակները՝ համապատասխանաբար՝ արում- և արամ-, որոնք ածանցյալ ձևերով կվերածվեն արմ-ի: Առաջին հայկազունների՝ Հայկի որդու և թոռան Արամանեակի ու Արամայիսի անունները կարելի կլիներ համարել Արամ անվան ածանցյալներ, սակայն իբր Արամայիսի անունով կոչված Արմավիրի անվան մեջ ունենք արմ-, այլ ոչ թե արամ-, բացի այդ, առասպելում Արամը Հայկի յոթերորդ սերունդն է, և անտրամաբանական է, թե ինչու պետք է նրա հեռավոր նախնիները՝ տոհմի երկրորդ ու երրորդ ներկայացուցիչները, կոչվեին նրա անունով: Հետևաբար ամենահավանական մեկնաբանությունը հետևյալն է. իսկական ձևերը Արմանեակ-ն ու Արմայիս-ն են, որոնք ծագում են արիմ- (գուցե և արում-) արմատից, իսկ երկրորդ վանկում -ա- ունեցող ձևերը երկրորդական են՝ ձևափոխված Արամի՝ տոհմի ամենաակնառու ներկայացուցչի անվան ազդեցությամբ: Դա կարող է վկայել նաև ասորեստանյան և ուրարտական արձանագրություններից հայտնի* Erimena *անձնանունը (հավանաբար հայ. Ար(ի)մենա)[51]: Ըստ այդմ՝ արմեն ցեղանունը ևս, ամենայն հավանականությամբ, արիմ- արմատի ածանցյալ մի ձև է (հիշենք նաև Մարկվարտի կողմից վաղնջահայերի նույնացումը Արիմքի հետ):*

Հայկական ավանդական վեպերին բնորոշ է հերոսների հետևյալ ծննդաբանական շարքը. 1. տոհմի հիմնադիր՝ աստվածային կերպար, 2. դիցաբանական երկվորյակներ, 3. գլխավոր հերոս՝ վիշապամարտիկ, 4. մեռնող և հարություն առնող հերոս[52]: Դիցաբանական երկվորյակներին բնորոշ է նրանց անունների նույնարմատ կամ ուղղակի նման լինելը (օրինակ՝ հայկական Սանասար և Բաղդասար, Երվանդ ու Երվազ, խուռիական Թեշուբ և Թաշմիշու, հռոմեական

---

[50] *«Սևի ու սպիտակի» առասպելի համատեքստում այս և նման հնդեվրոպական տեղանունների մասին տե՛ս* Petrosyan. 2002, Petrosyan. 2018a, 126–129.

[51] *Զահուկյան. 1987, 431–432:*

[52] Petrosyan. 2002, 115–121.

Remus *ու* Romulus, *ուելսյան* Llud *և* Llefelis*): Երկվորյակներից մեկին հաճախ տրվում է ավելի կարևոր դեր, և հիերարխիկ տարբերությունների արդյունքում նրանք երբեմն փոխակերպվում են ավագ ու կրտսեր եղբայրների կամ հոր և որդու: Այսպես՝ «Տարոնի պատմության» մեջ Գիսանեն ու Դեմետրը հիշատակվում են մեկ որպես եղբայրներ, մեկ՝ որպես հայր ու որդի, իսկ իրանական էպոսում հայր և որդի Լուհրասպն ու Գուշտասպը ծագում են երկվորյակների կերպարներից[53]: Ար(ա)մանեակն ու Ար(ա)մայիսը, դատելով ծննդաբանական շարքում նրանց գրված դիրքից (տոհմի հիմնադրից անմիջապես հետո) և անունների նմանությունից, նույնպես պիտի ծագեին երկվորյակային կերպարներից[54]:*

Նոր քաղաքի հիմնման առասպելը

Ազգածին ավանդություն: *Հայկի որդի Ար(ա)մանեակը լքում է Վանա լճի հյուսիս-արևմուտքում գտնվող հոր ոստանը և հաստատվում Արարատյան դաշտում՝ Արագած լեռան ստորոտում, որտեղ նրա որդի Ար(ա)մայիսը կառուցում է հայոց առաջին մայրաքաղաքը և իր անունով այն անվանում Արմավիր[55]: Հաշվի առնելով այդ հերոսների անունների մասին ասվածը՝ քաղաքանունը կարող է մեկնաբանվել որպես Արմ-ա-վիր, որտեղ արմ-ը ծագում է* $*h_2reh_1mo$-/$*h_2roh_1mo$-*ից, -ա-ն հողակապ է, իսկ վիր-ի ամենահավանական ստուգաբանությունը հանգում է այն խեթերեն* pir՝ *«տուն/բնակավայր» արմատին (հմմտ. Խորենացու և Սեբեոսի վկայությունները Արամայիսի կողմից Արմավիր քաղաքի՝ որպես «տուն բնակության» հիմնադրման մասին), որտեղ -ւ-ն միջձայնավորային* -p-*ի հայերեն կանոնավոր արտացոլումն է[56]:*

Ակնհայտ է հետևյալ վերակազմությունը: Երկվորյակ եղբայրները, որոնք անձնավորում են պատանի ռազմիկների եղբայրությունն ու նրանց առաջնորդներին, լքում են իրենց հոր երկիրը և ինչ-որ տեղ՝ հեռվում, կառուցում իրենց նոր բնակավայր/քաղաքը, որն անվանում են «Սև տուն/բնակավայր»՝ ըստ եղբայրությանը բնորոշ գույնի, ընդ որում՝ Ար(ա)մանեակ և Ար(ա)մայիս անունները ևս ծագում են ամպրոպի ու պատանի ռազմիկների աստծո «սև» մակդիրից, իսկ իրենք՝ հերոսներն էլ այդ աստծու վիպական փոխակերպումներն են:

«Վիպասանք»: *Այսպես է կոչվում հայոց հին արքայատոհմի՝ Երվանդունիների և նրա ճյուղի՝ Արտաշիսյանների դարաշրջանի էպոսը, որից շատ հատվածներ են պահպանվել Խորենացու մոտ: Այստեղ, ինչպես ազգածին ավանդության մեջ, գլխավոր գործողությունները տեղի են ունենում Արարատյան դաշտում ու մերձակայքում: Արքայական ծագում ունեցող մի կնոջ և ցլի անբնական հարաբերությունից ծնվում են Երվանդ ու Երվազ եղբայրները, որոնցից առաջինը դառնում է արքա, իսկ երկրորդը՝ քրմապետ: Հայագիտության մեջ նրանք համարվում են երկվորյակների տիպական կերպարներ[57]: Երվանդը ակնհայտորեն Երվանդունիների տոհմի դիցաբանական հիմնադիրն է, որին Խորե-*

[53] Wikander. 1950, 317–318.

[54] *Պետրոսյան. 2020, 12:*

[55] *Խորենացի. 1991, 39, Սեբեոս. 1939, 5:*

[56] Petrosyan. 2012, 275–277.

[57] *Հարությունյան. 2000, 105–111, 341–348:*

նացին, փոխելով էպոսի ժամանակագրությունը, տարել է ավելի ուշ ժամանակներ[58]: Ընդ որում՝ Երվանդը կառուցում է երկրի նոր մայրաքաղաքը՝ Երվանդաշատը: Նրա կերպարը բնութագրվում է ամպրոպի աստծու հատկանիշներով[59], և ցույը կա այդ աստծո խորհրդանիշն էր հին հնդեվրոպական ու մերձարևելյան ավանդույթներում[60]:

«Տարոնի պատմություն»: *Եղբայրներ կամ հայր և որդի Գիսանեն ու Դեմետրը, ինչպես և իրենց հետևորդները, իշխանություն են ստանում Տարոնում և կառուցում են Վիշապ քաղաքը: Տարոնը պաշտամունքի կենտրոնն էր ամպրոպային Վահագն աստծու, որը, ինչպես իր հնդեվրոպական համապատասխանությունները, առասպելում կռվում ու հաղթում է օձ-վիշապին: Ընդ որում՝ նրա բնորոշ մակդիրն էր վիշապաքաղ, իսկ Գիսանեն ինքը, ինչպես տեսանք, Վահագնի մի վիպական փոխակերպումն է: Վիշապ քաղաքի առթիվ նշենք, որ առասպելներում նոր կառույցները՝ բնակավայրեր, տաճարներ և այլն, հաճախ հիմնվում են աստծու հակառակորդ վիշապի կամ նման մի կերպարի սպանության վայրում ու կոչվում նրա անունով (հմմտ. և Նեմրութ լեռան մասին ասվածը):*

«Սասնա ծռեր»: *Երկվորյակներ Սանասարն ու Բաղդասարը լքում են իրենց երկիրը և հեռվում՝ Սև սարի վրա, կառուցում իրենց նոր քաղաք Սասունը[61], որը դառնում է հերոսների հաջորդ սերունդների օրրանը: Սև սարի իրական անվանումը Սիմ է, որը ծագում է հնդեվրոպական* *k'ieh$_1$mo- *«սև, մուգ գույն» արմատից[62]: Սանասարը իրեն համեմատում է ամպրոպաբեր սև ամպի հետ, այսինքն՝ նա ոչ միայն ամպրոպային հերոս է, այլև, ինչպես Արամը և ուրիշները՝ «սև» հերոս և, ընդհանուր առմամբ, շատ ավելի ցայտուն ձևով, քան Արամանեակը, Արամն ու Երվանդը, ներկայացնում է ամպրոպի աստծու վիպական փոխակերպումը[63], ինչը ցույց է տալիս, որ նրա աստվածային նախորդը՝ հին հայոց ամպրոպի աստվածը, երկվորյակ էր, ինչպես հնդկական Ինդրան և խուռիական Թեշուբը[64]:*

Քաղաքի հիմնման հիշյալ չորս դեպքերում (Արմավիր, Երվանդաշատ, Վիշապ, Սասուն) նկատելի են ընդհանուր գծեր, որոնցից կարելի է նշել հետևյալները.

1. բոլոր օրինակները կապված են ամպրոպային առասպելի հետ. Ար(ա)մանեակ և Ար(ա)մայիս անունները ծագում են ամպրոպի աստծու՝ *koryos-*ի առաջնորդի մականվան արմատից: *Երվանդը, Սանասարը և Գիսանեն ամպրոպի աստծու վիպական փոխակերպումներ են: Վիշապ քաղաքը կոչվել է ամպրոպի աստծու հակառակորդի անունով:*

2. նոր քաղաքի (մայրաքաղաքի կամ վիպական կենտրոնի) հիմնումը վերագրվում է երկվորյակներին, երկվորյակատիպ հերոսներին կամ նրանցից մեկին (Արամայիս, Երվանդ, Գիսանե և Դեմետրե, Սանասար ու Բաղդասար):

---

[58] Ղ ա ռ ե ջ յ ա ն. 2012, 48:

[59] Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2000, 105–112:

[60] И в а н о в. 1980.

[61] Ա բ ե ղ յ ա ն. 1966, 333:

[62] M a r t i r o s y a n. 2010, 683, 812.

[63] Ա բ ե ղ յ ա ն. 1966, 417, 1975, 72–76:

[64] Պ ե տ ր ո ս յ ա ն. 2020, 19–21, 43, 47–51:

3. քաղաքի հիմնադիրները կապված են սև գույնի հետ (Արամանեակ և Արամայիս, Գիսանե ու Դեմեռը, Սանասար):

4. քաղաքի կամ լեռան (բլրի) անունը, որի վրա կառուցվում է քաղաքը, նույնպես կարող է կապված լինել «սևի» հետ (Արմավիր, Սասուն):

Հնդեվրոպական զուգահեռներ

Հնդեվրոպական ժողովուրդների առասպելներում կան պատմական օրինակներ և առասպելներ երիտասարդական եղբայրությունների կողմից քաղաքների ու երկրամասերի հիմնադրման և դրանք իրենց անուններով կոչելու մասին: Առանձին կարելի է նշել «գայլ» նշանակող ցեղանուններն ու տեղանունները, քանի որ դրանց գոնե մի մասի ծագումը կարող է կապ ունենալ պատանի ռազմիկների այդ կենդանական սիմվոլի հետ[65]: Ստորև ներկայացվում են մի քանի ակնհայտ հնդեվրոպական օրինակներ, որոնք ցույց են տալիս պատանի ռազմիկների կողմից քաղաքի հիմնադրման առասպելի տարածվածությունը:

Հնդկաստան: *«Մահաբհարատայում» որպես պատանեական եղբայրության վիպական արտացոլում կարող են դիտվել էպոսի հինգ գլխավոր հերոսները՝ Պանդավա եղբայրները (որոնցից երկուսը երկվորյակներ են): Հոր մահից հետո նրանք մեծանում են իրենց հորեղբայր Դհրտարաշտրա արքայի արքունիքում, նրա որդիների՝ Կաուրավա եղբայրների հետ մշտական տարաձայնությունների մեջ: Հերոսների՝ պատանեական եղբայրության անդամներ լինելը բացահայտվում է այն դրվագում, որտեղ նրանք, զրկված թագավորությունից, այլևայլ սխրանքներ գործելով թափառում են անտառներում: Կա նաև նոր քաղաքի կառուցման պատմություն. Պանդավաները լքում են իրենց երկիրը և հեռավոր մի թագավորություն հիմնում, որտեղ կառուցում են մայրաքաղաք Ինդրապրաստհան («Ինդրայի հարթավայրը»)՝ այն դարձնելով քաղաքներից լավագույնը[66]:*

Պրուսիա և Լիտվա: *Ըստ տևտոնական ժամանակագիր Պիտեր ֆոն Դուսբուրգի (XIV դ.)՝ պրուսների և ողջ բալթյան աշխարհի հեթանոս կրոնական առաջնորդը, որին նա համեմատում է Հռոմի պապի հետ, ապրել է Պրուսիայի Ռոմովե կոչվող վայրում, ընդ որում՝ Ռոմովեն էլ համարում է ծագած լատիներեն Ռոմա «Հռոմ» անունից: Պրուսները բալթիական՝ լիտվացիներին և լատվիացիներին ազգակից ցեղեր էին, որոնք ապրում էին ներկայիս Գերմանիայի, Լեհաստանի և Ռուսաստանի Կալինինգրադի մարզի տարածքներում: Իսկ պրուսական ժամանակագիր Սիմոն Գրունաուի (XVI դ.) վկայությամբ՝ Պրուսիայի առասպելական հիմնադիրները՝ Վիդևուտ և Բրուտեն եղբայրները, եկել են Կիմբրիայից (ժամանակակից Դանիայի տարածք) ու բնակություն հաստատել Պրուսիայում: Վիդևուտը հիմնադրել է պրուսների աշխարհիկ իշխանությունը և դարձել արքա, իսկ Բրուտենը հիմնել է գլխավոր պաշտամունքային կենտրոնը (այսինքն՝ ֆոն Դուսբուրգի Ռոմովեն), որն այս հեղինակը կոչում է Ռիկոյտո, այդտեղ կառուցել բնակավայր իր աստվածների ու իր համար և դարձել գլխավոր քուրմ: Նշված վայրում՝ մի մեծ կաղնու վրա, եղել են տեղի երեք աստվածների կուռքերը՝ ամպրոպի աստված Պերկունոյի գլխավորությամբ: Վիդովուտի*

[65] Kershaw. 2000, 133–142.

[66] Васильков. 2019.

դրոշի վրա Պերկունոն պատկերված է եղել որպես սև մորուքավոր տղամարդ, իսկ մյուս երկուսը համապատասխանաբար՝ անմորուս երիտասարդ ու մահվան պես գունատ ծերունի[67]: Վ. Վ. Իվանովի և Վ. Ն. Տոպորովի կարծիքով՝ Վիդևուտը և Բրուտենը դիցաբանական երկվորյակներ են: Եղբայրների գալուստը հեռուներից, նոր բնակավայրի հիմնումը և սևի ու սպիտակի հակադրությունն այստեղ ակնհայտ են: Ըստ այդմ՝ այս պատմությունը կարելի է դիտել պատանեկան եղբայրությունների արշավանքների ու քաղաքների հիմնման մասին հնդեվրոպական լեգենդների համատեքստում, և Ռոմովեն էլ՝ որպես այն տեղանուններից մեկը, որոնք ծագում են *h_2roh_1mo*-ից (բալթյան լեզուներում կոկորդային* h_2*-ը և* h_1 *-ը հետքեր չեն թողել):*

Լիտվայի մայրաքաղաք Վիլնյուսի հիմնադրման լեգենդը պատմում է, որ գլխավոր քուրմ Կրիվե-Կրիվայտիսի որդին՝ Լիզդեյկան, մեծանալով ինքն է դառնում Կրիվե-Կրիվայտիս՝ գլխավոր քուրմ և դուշակ, Լիտվայի մեծ իշխան Գեդիմինասի՝ Վիլնյուսի հիմնման մասին երազի մեկնաբանողը: Ըստ Իվանովի և Տոպորովի՝ այս լեգենդը Ռոմովեի հիմնման պրուսական ավանդության մի ուշ զուգահեռն է:

Իտալիա: *Այս համատեքստում հայ-իտալական կապերն անհամեմատ ավելի խորն են ու հարուստ: Հանրահայտ է երկվորյակների կողմից Հռոմի հիմնման ավանդությունը: Երկվորյակ եղբայրներ Հռեմոսն ու Հռոմուլոսը (լատ.* Remus *և* Romulus*) Ալբա Լոնգա քաղաքի արքա Նումիտորի դստեր և պատերազմի գայլային աստված Մարսի որդիներն էին: Նրանց մայրը սպանվում է, Նումիտորին գահընկեց է անում իր եղբայր Ամուլիոսը, նորածին երկվորյակներին կերակրում է Մարսի ուղարկած էգ գայլը, ապա նրանց գտնում և մեծացնում է մի հովիվ: Եղբայրները մեծանալով դառնում են պատանեկան խմբերի առաջնորդներ և զբաղվում թալանով՝ անասնագողությամբ, այսինքն՝* *koryos*-ի տիպիկ ներկայացուցիչներ են[68]: Նրանք սպանում են Ամուլիոսին և իրենց պապին վերադարձնում գահին, ապա որոշում կառուցել իրենց նոր քաղաքը: Քաղաքի տեղի հարցում վիճաբանության պատճառով Հռոմուլոսը սպանում է Հռեմոսին, հիմնում քաղաքը, այն անվանում իր անունով՝ Հռոմ (լատիներեն՝* Rōma*), դառնում նրա տիրակալը և այն բնակեցնում տարբեր ծագում ունեցող մարդկանցով (լատիններ, էտրուսկներ ու սաբիններ):*

Կարծիք կա, որ Ժ. Դյումեզիլի ամենակարևոր ներդրումը գիտության մեջ բացահայտումն է այն իրողության, որ Հռոմի վաղ շրջանի արքաների ողջ կամ համարյա ողջ ավանդական պատմությունը իրականում պատմականացած հնդեվրոպական առասպել է[69]: Շատ հատկանշական է, որ հայկական վիպական հերոսների ծննդաբանական շարքի բնութագրերը (ըստ Դյումեզիլի գործառույթների) շատ մոտ են Հռոմի առաջին թագավորների շարքին[70]: Ընդ որում՝ Հռոմում կարելի է գտնել նաև հնդեվրոպական արմատներով կազմված «սևի ու սպիտակի» առասպելի հետքեր: Այսպես՝ Հին Հռոմի կենտրոնական փողոցներից

---

[67] Puhvel. 1974; Иванов, Топоров. 1983. 170–175.

[68] Bremmer. 1987, 32–34.

[69] Littleton. 1982, 70.

[70] Petrosyan. 2002, 118–122.

մեկը կոչվում էր Argiletum *«Արգոսի մահ»: Ապա Հոմուլոսը Հռոմը հիմնադրում է Տիբեր գետի ափին, որի վտակներից մեկը սկիզբ է առնում Ալբա «Սպիտակ» լճից: Այդ գետը սկզբնապես կոչվել է* Albula < $h_2$elbh- *(Ալբա անվան նվագականը), իսկ Հռոմուլոս անունը կարելի է հանգեցնել հնդեվրոպական* *$h_2$roh$_1$mo- *«սև» արմատին՝ նույն* -ul- *նվագական վերջածանցով, որը վկայում է այդ անունների՝ առասպելաբանաստեղծական համատեքստում որոշակի կապի մասին: Նույն առասպելույթի մեկ այլ դրսևորում է հռոմեական երկվորյակների ծագումը Ալբա Լոնգա («Սպիտակ երկար») քաղաքից և հետագայում այս քաղաքի ու Հռոմի պատերազմը: Որոշվում է, որ պատերազմը պետք է փոխարինվի հռոմեացի և ալբացի եռվորյակ եղբայրների՝ Հորացիոսների ու իրենց զարմիկ Կուրիացիոսների միջև մարտով: Մարտի սկզբում երկու Հորացիոս եղբայրները զոհվում են, սակայն երրորդ եղբորը հաջողվում է խորամանկորեն մեկուսացնել իր հակառակորդներին և մեկ առ մեկ սպանել նրանց: Հետագայում Ալբա Լոնգան ոչնչացվում է հռոմեացիների կողմից*[71]*:*

Այսպիսով՝ կարելի է ասել, որ Հռոմի հիմնադրման լեգենդում երկվորյակ հերոսները՝ քաղաքի հիմնադիրները, պատանեկան եղբայրությունների տիպիկ ներկայացուցիչներ են, և այստեղ ևս, ինչպես հայկական էպոսներում, ի հայտ են գալիս հնդեվրոպական «սևի ու սպիտակի» առասպելի արձագանքները: Գիտության մեջ առավել հավանական է համարվել Հռոմ տեղանվան էտրուսկյան ծագումը: Ըստ Լ. Դերուայի և Մ. Մուլոնի տեղանունների բառարանի՝ Rōma *(Հռոմ) անվան ծագումը պարզ չէ: Լավագույն վարկածի համաձայն՝ այն լատինականացումն է էտրուսկյան* Ruma *ձևի, որը վկայված է էտրուսկյան* Cneve Tarχunies Rumaχ *«Հռոմեացի Գնեոս Տարկվինիոս» արձանագրության մեջ*[72]*: Սակայն, հաշվի առնելով վերևում ասվածը, այն կարող է ստուգաբանվել որպես* *$h_2$roh$_1$mo- *«սև» նախաձևի կանոնավոր լատինական արտացոլումը (*h_2*-ը հետք չի թողել,* h_1*-ը պատճառ է դարձել* o*-ի երկարության, իսկ -a-ն վերջավորությունն է): Իհարկե, Հռոմի նախապատմությունը դժվար և բարդ խնդիր է: Հաշվի առնելով էտրուսկյան ենթաշերտի հավանականությունը՝ կարելի էր ենթադրել, որ էտրուսկյան անունը վերախմաստավորվել է ըստ հիմնադիր երկվորյակների հնդեվրոպական առասպելի: Սակայն հնդեվրոպական, հատկապես հայկական ակնհայտ զուգահեռները ցույց են տալիս հենց հնդեվրոպական ստուգաբանության հավաստիությունը:*

Հռոմի հիմնման լեգենդը մի շարք զուգահեռներ ունի հին իտալյան ցեղերի պատմության և առասպելների մեջ: Օրինակ՝ հայտնի է, որ լուկանիացի երիտասարդ ռազմիկները, ստորին դասերի ներկայացուցիչների հետ, կարողացել են հարևաններից տարածք նվաճել և մ. թ. ա. 356 թվականին այնտեղ հիմնադրել իրենց սեփական քաղաքը[73]*: «Սուրբ գարնան» (լատ.* ver sacrum*) ծեսը հայտնի էր գրեթե բոլոր իտալյան ցեղերի մեջ, սակայն լավագույն օրինակները հայտնի*

---

[71] *Այս մասին՝ «սևի ու սպիտակի» առասպելի համատեքստում, տե՛ս* Petrosyan. 2002, 75: *Առասպելի հայկական տարբերակի մասին, որտեղ «սպիտակը» կոդավորվում է* $h_2$elbh- *արմատով, տե՛ս* Petrosyan. 2002, 66–67.

[72] Deroy, Mulon. 1992, 409, *տե՛ս նաև* Ernout, Meillet. 1932, 830; Поспелов. 2002, 352.

[73] Kershaw. 2000, 134.

են սաբիններից: Ըստ ծիսակարգի՝ գարնանը իբր պատանեկան ջոկատների և պատերազմի աստծո՝ Մարսի (նրան նվիրված կենդանու տեսքով) ղեկավարությամբ 20–21 տարեկան երիտասարդները լքում էին իրենց հողերը և, տեղափոխվելով այլ վայրեր, դուրս էին մղում տեղի բնակիչներին ու հիմնում իրենց բնակավայրերը: Իտալիայի ցեղերի մեծ մասը և շատ բնակավայրեր ունեին իրենց պատմությունները, որոնք սկսվում էին ver sacrum *արշավանքների լեգենդից, իսկ Պրենեստե քաղաքի հիմնադրման պատմության մեջ առկա են նաև երկվորյակ կերպարներ (հիմնադրի ավագ ազգական-դաստիարակները, ինչը կարող է դիտվել որպես հիմնադիր երկվորյակների առասպելության մի փոխակերպում)[74]: Այդ ծեսի մասին հաղորդում են մի շարք հին հեղինակներ (Ֆեստոս, Լիվիոս, Ստրաբոն, Դիոնիսիոս Հալիկառնասցի և այլք): Ստեղծված նոր քաղաք/հանրույթները երբեմն կոչվել են այն կենդանիների անունով, որոնք «գլխավորել» են սրբազան արշավը (օրինակ՝ գայլն ու փայտփորիկը, որոնք նվիրված էին Մարսին, ինչպես նաև ուրուրը, ձին և ցուլը), բայց եղել են նաև այնպիսիք, որոնք կոչվել են հենց Մարսի անունով* (Marsi, Marricini, Mamertini): *Ինչպես տեսանք, Ինդրապրաստհա, Արմավիր, ինչպես նաև Արմենիա «Հայաստան» երկիրը անվանակոչվել են նույն սկզբունքով (հմմտ. Ինդրան, Արամանյակն ու Արամը՝ որպես պատանի ռազմիկների առաջնորդներ):* Ver sacrum*-ի նման ավանդույթներ հայտնի են նաև հնդեվրոպական այլ ժողովուրդների շրջանում[75]: Պետք է նշել, որ թեև* ver sacrum *ծեսը բացահայտ կերպով չի նշվում Ռոմուլոսի լեգենդում[76], սակայն նրա նմանությունը Հռոմի հիմնման ավանդույթին ակնհայտ է:*

Այստեղ նպատակահարմար է նշել հնդկական, հայկական և հռոմեական երկվորյակների միջև ընդհանուր ծագումը ցույց տվող ևս մի քանի համապատասխանություններ: Մայրը Սանասարին ու Բաղդասարին հղանում է կախարդական «կաթնաղբյուրից» խմած մեկուկես բուռ ջրից, ընդ որում՝ Սանասարը ծնվում է մեկ, իսկ Բաղդասարը՝ կես բուռ ջրից: «Ռամայանայում» թագավորի երեք կանայք խմում են պայաս (կաթնային ըմպելիք է կամ շիլա): Թագավորի առաջին կինը՝ Ռամայի մայրը, խմում է պայասի կեսը, երկրորդը՝ մնացածի կեսը, երրորդը՝ երկրորդից հետո մնացածի կեսը, իսկ վերջին մնացորդը նորից տրվում է երկրորդ կնոջը: Արդյունքում ծնվում են Ռաման և նրա երեք եղբայրները: Երկրորդ կինը ծնում է երկվորյակներ, որոնք բեղմնավորվել են պայասի մեկ քառորդ և մեկ ութերորդ մասերից: Նրանցից առաջինը դառնում է Ռամայի (նրանց բեղմնավորման պայասների հարաբերակցությունը նույնպես 2:1 է), իսկ երկրորդը՝ երրորդ կնոջ որդու ուղեկիցը: Ակնհայտ է, որ կերպարները կրկնապատկելու և բազմապատկելու հնդկական բնորոշ միտումից բացի, հնդիկ ու հայ հերոսների ծննդյան պատմությունները գրեթե նույնական են[77]: Սանասարն ու Բաղդասարը ուշ շրջանի անուններ են, և նրանց ընդհանուր նախատիպերը ազգածին ավանդության Արամանյակն ու Արամայիսն են, որոնց, ինչպես

---

[74] Dumézil. 1970, 253.

[75] Dumézil. 1970, 208; Kershaw. 2000, 136–137, 172–174.

[76] Momigliano. 1989, 58.

[77] Гринцер. 1974, 214–215; *Ա հ յ ա ն. 1985, 33,* Petrosyan. 2002, 64.

Ռոմայի և Հռոմուլոսի անունները, կապված են հնդեվրոպական *h_2reh_1mo- «սև»-ի հետ:

Սասունի և Հռոմի հիմնման պատմություններում կան մի շարք այլ համընկնումներ՝ նշված Դյումեզիլի կողմից[78]: 1. Երկվորյակներն արքայի թոռներն են, նրա դստեր որդիները, 2. նրանք ծնվում են գերբնական կերպով, 3. ազատում են իրենց պապին թշնամուց, 4. և իրենց մորը՝ նույն բռնակալից, 5. հրաժարվում են իրենց պապի քաղաքում մնալուց, 6. հիմնում են ապագայի նոր քաղաքը, 7. որը բնակեցնում են կամավորներով: Այս համընկնումները պարզապես աչքի են զարնում և, կարելի է ասել, եզակի են հնդեվրոպական առասպելաբանության մեջ: Սանասարի և Բաղդասարի մերձավորությունը հնդկական ու հռոմեական հերոսներին ակնհայտորեն ծանրակշիռ փաստարկ է Rōma < *h_2roh_1mo - *ստուգաբանության օգտին:*

Այլ զուգահեռներ: *Կան այլ հնդեվրոպական վկայություններ առասպելական երկվորյակների կողմից քաղաքների հիմնման մասին: Հունական ավանդույթում երկվորյակ Դիոսկուրոսները հիմնադրել են Սպարտան և Դիոսկուրիասը (ներկայիս Սուխումը), իսկ Ամփիոնն ու Զեթոսը կառուցել են Թեբեի պարիսպները: Մի լեգենդի համաձայն՝ Հյուսիսային Իռլանդիայի մայրաքաղաք Էմայն Մախան՝ «Մախայի երկվորյակները», հիմնվել է այն տեղում, որտեղ Մախա անունով հերոսուհին երկվորյակներ է ծնել: Նույն քաղաքների կապակցությամբ ի հայտ են գալիս նաև «սևի ու սպիտակի առասպելի» հետքեր՝ Սպարտայի արքաների երկվորյակ նախնիների մոր անունն էր Արգիա, Էմայն Մախայի մասին մեկ այլ լեգենդում հիմնադիր Մախայի և նրա ամուսնու նախնիներն էին Արգետմայն ու Արգետմորը (հմմտ.* $*h_2erg$'- *«սպիտակ»)[79]: Այս տվյալները կարելի է դիտել որպես առաջարկվող վերակազմությանն աջակցող փաստարկներ, սակայն դրանք հավելյալ նյութ չեն տալիս վերակազմության համար:*

Եզրակացություն

Այսպիսով՝ վերականգնվում է երկվորյակների՝ պատանեկան եղբայրության անդամների կողմից քաղաքի հիմնման հնդեվրոպական առասպելը: Լավագույն համընկնումները հանդիպում են հայկական և հռոմեական ավանդույթներում: Հնդեվրոպական համատեքստում հայերենին ամենամոտ լեզուն հունարենն է[80], ինչը լավ համապատասխանում է հնագենետիկական վերջին տվյալներին[81], մինչդեռ լատիներենը և իտալյան մյուս լեզուները բավականին

---

[78] D u m é z i l. 1994, 119–120.

[79] *Երեք հարյուր սպարտացիների առասպելական կռիվը երեքհարյուր արգոսցիների հետ (Հ ե ր ո դ ո տ ո ս. 1986, 36–37): Ակնհայտորեն համապատասխանում է հռոմեացի և ալբացի երեքական երկվորյակ եղբայրների կռվին, ուր հակառակորդ քաղաքներից մեկի «սպիտակ» անվանումը ակնարկում է մյուսների՝ Սպարտայի ու Հռոմի կապը սևի հետ: Հատկանշական է, որ այդ կռվից հետո իբր արգոսցիները սկսել են սափրել իրենց գլուխները, իսկ սպարտացիները, ընդհակառակը, վարսեր պահել, որտեղ սափրված և մազածածկ հակադրությունը համադրելի է «սպիտակ» ու «սև» հատկանիշների հետ. տե՛ս* P e t r o s y a n. 2002, 76.

[80] M a r t i r o s y a n. 2013, *տե՛ս նաև* K a s s i a n et al. 2021.

[81] P e t r o s y a n, P a l y a n. 2025.

հեռու են: Հնդկական, հայկական, բալթյան և հռոմեական զուգահեռների առկայությունը վկայում է առասպելի համահնդեվրոպական բնույթը (հավանաբար՝ բացառությամբ անատոլիական ավանդույթի):

Արմեն Պետրոսյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի գլխավոր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ ժողովրդի ծագում, նախապատմություն, մշակույթ, տարածաշրջանի հին կրոններ և էպոսներ, հնդեվրոպական առասպելաբանություն, հայ վիպական բանահյուսություն, լեզվաբանություն: Հեղինակ է 15 գրքի և շուրջ 300 հոդվածի: ORCID:0000-0002-1982-5593. alpehist@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1966, Երկեր, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 572 էջ:

Աբեղյան Մ. 1975, Երկեր, հ. Է, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 604 էջ:

Ագաթանգեղոս. 1983, Հայոց պատմություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 486 էջ:

Ալիշան Ղ. 1895, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, Մխիթարյան տպարան, 524 էջ:

Ահյան Ս. 1985, «Սասնա ծռեր» հայկական էպոսը և հնդեվրոպական երեք ֆունկցիաները. – ՊԲՀ, № 1, էջ 32–46:

Աճառյան Հ. 1962, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, Պետական համալսարանի հրատ., 384 էջ:

Խորենացի. 1991, Պատմութիւն հայոց. քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 486 էջ:

Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Վ. Սէթէան» հրատ., 528 էջ:

Հերոդոտոս. 1986, Պատմություն 9 գրքից, թարգմ. Ս. Կրկյաշարյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 651 էջ:

Հոմերոս. 1955, Իլիական, թարգմ. Հ. Համբարձումյան, Երևան, Հայպետհրատ, 512 էջ:

Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 534 էջ + 33 ներդիր:

Ղռեչյան Լ. 2012, Երկվորյակների առասպելը և դրա տարբեր դրսևորումները հայ վիպական ավանդության համակարգում, Երևան, «Գիտություն», 151 էջ:

Մնացականյան Ա. 1976 Թուխ մանուկ հուշարձանների մասին. – ՊԲՀ, № 2, էջ 189–204:

Յովհան Մամիկոնեան. 1941, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, Մատենադարան, 300 էջ:

Պետրոսյան Ա. 2020, Հայկական էպոսի հնագույն ակունքները 2, Երևան, ՀԱԻ հրատ., 264 էջ:

Ջահուկյան Գ. 1987, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 748 էջ:

Սարգսյան Գ. 1998, Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները. – ՊԲՀ, № 2–3, էջ 27–50:

Սարգսյան Գ. 1998, Հատուկ անունների ստուգաբանությունը Մովսես Խորենացու պատմության մեջ. – ՊԲՀ, № 1–2, էջ 113–128:

Սեբեոս. 1939, Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն, Երևան, ԽՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալ, 218 էջ:

Փավստոս Բուզանդ. 1987, Փաւստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն հայոց, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 456 էջ:

Абаев В. И. 1979, Историко-этимологический словарь осетинского языка, т. 3. М.–Л., «Наука», 254 с.

Васильков Я. В. 2019, Армянский эпос о неистовых сасунцах и индийская «Махабхарата»: сходство этнографического субстрата. – «Археология, этнография и антропология Евразии», с. 140–147.

Гринцер П. А. 1974, Древнеиндийский эпос: генезис и типология. М., «Наука», 448 с.

Иванов В. В. 1980, Бык. – «Мифы народов мира», т. 1. М., «Советская энциклопедия», с. 203.

Иванов В. В., Топоров В. Н. 1974, Исследования в области славянских древностей. М., «Наука», 340 с.

Иванов В. В., Топоров В. Н. 1983, К проблеме лтш. Юмис и балтийского близнечного культа. – «Балто-славянские исследования 1982», с. 140–175.

Поспелов Е. М. 2002, Географические названия мира: топонимический словарь. М., «Астрель», 608 с.

Страбон. 1964, География (в 17 книгах). Пер. Стратановского Г. А. М., «Наука», 944 с.

Ahyan S. 1982, Les débuts de l'histoire d'Arménie et les trois fonctions indo-européennes. – "Revue de l'histoire des religions", № 199/3, p. 251–271.

Bremmer J. N. 1987, Romulus, Remus and the Foundation of Rome. – «Roman Myth and Mythography». London, "Institute of Classical Studies", p. 25–48.

Deroy L., Mulon M. 1992, Dictionnaire de noms de lieux. Paris, "Le Robert", 531 p.

Dumézil G. 1970, Archaic Roman Religion. Vol. I. Chicago, "University of Chicago Press", 394 p.

Dumézil G. 1992, Mythes et dieux des indo-européens: textes réunis et présentés par Hervé Coutau-Bégarie. Paris, "Flammarion", 322 p.

Dumézil G. 1994, Le roman des jumeaux. Paris, "Gallimard", 337 p.

Ernout A., Meillet A. 1932, Dictionaire étymologique de la langue latine. Paris, "Kliencksieck", 1108 p.

Healey J. F. 2001, The Religion of the Nabataeans: A Conspectus. "Brill", 242 p.

Hoffner, H. A. 1988, Hittite Myths. Tr. by H. A. Hoffner. Atlanta, Georgia, "Scholars Press", 92 p.

Kassian A. S. et al. 2021, Rapid radiation of the inner Indo-European languages: an advanced approach to Indo-European lexicostatistics. – "Linguistics", № 59 (4), p. 949–979.

Kershaw K. 2000, The One-eyed God: Odin and the (Indo-) Germanic Männerbünde. Washington DC, Institute for the study of Man, 306 p.

Laroche E. 1985, Toponymes hittites ou pre-hittites dans la Turquie moderne. – "Hethitica", 6, p. 83–102.

Lincoln B. 1991, Death, War, and Sacrifice. Chicago, London, "Chicago University Press", 289 p.

Littleton S. C. 1982, The new comparative mythology: an anthropological assessment of the theories of Georges Dumézil. Berkeley, Los Angeles, London, "University of California Press", 319 p.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 3

Mallory J. P. 2007, Indo-European warfare. – “War and sacrifice: studies in the archaeology of conflict”. Leiden, Boston, “Brill”, p. 77–98.

Mallory J. P., Adams D. Q. 1997, Encyclopedia of Indo-European Culture. London, Chicago, “Fitzroy Dearborn Publishers”, 829 p.

Markwart J. 1928, Le berceau des arméniens. – “Revue des études arméniennes”, № 8, p. 210–232.

Martirosyan K. 2010, Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon. Leiden, Boston, “Brill”, 988 p.

Martirosyan H. K. 2013, The Place of Armenian in the Indo-European Language Family: the Relationship with Greek and Indo-Iranian. – “Journal of Language Relationship”, № 10, p. 85–139.

Mayrhofer M. 1996, Etymologisches Wörterbuch des Altindoarischen 2. Heidelberg, “C. Winter”, 865 S.

McCone K. 1987, Hund, Wolf und Krieger bei den Indogermanen. – “Studien zum Indogermanischen Wortschatz”. Insbruck, Institut für Sprachwissenschaft der Universität Innsbruck, S. 101–154.

Momigliano A. D. 1989, The Origins of Rome. – “The Cambridge Ancient History”, vol 7, part 2, The Rise of Rome to 220 B. C., “Cambridge University Press”, p. 52–112.

Petrosyan A. Y. 2002, The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic, Washington DC, Institute for the study of Man, 236 p.

Petrosyan A. Y. 2011, Armenian Traditional Black Youths: the Earliest Sources. – “Journal of Indo-European Studies”, p. 342–354.

Petrosyan A. Y. 2012, First Capitals of Armenia and Georgia: Armawir and Armazi (Problems of Early Ethnic Associations). – “Journal of Indo-European Studies”, p. 265–288.

Petrosyan A. Y. 2018, From Armenian Demonology: the K‘ağs. – “Journal of Indo-European Studies”, p. 206–218.

Petrosyan A. Y. 2018a, The problem of Armenian origins. Washington DC, Institute for the Study of Man, 232 p.

Petrosyan A. Y., Palyan A. I. 2025, The problem of Armenian origins in the light of recent archaeogenetic data. – “Matenadaran: Medieval and Early Modern Armenian Studies”, № 2, p. 69–94.

Puhvel J. 1974, Indo-European Structure of the Baltic Pantheon. – “Myth in Indo-European Antiquity”. Berkeley, Los Angeles, London, “University of California Press”, p. 75–85.

Puhvel J. 1987, Comparative mythology. Baltimore, London, “Johs Hopkins University Press”, 302 p.

Puhvel J. 1991, Hittite etymological dictionary. Vol. 3, Berlin, New York, “de Gruyter”, 461 p.

Sergent B. 2003, Les troupes de jeunes hommes et l’expansion indo-européenne. – “Dialogues d’histoire ancienne”, № 29, p. 9–27.

Schmitt R. 1984, Iranische Namenschichten und Namentypen bei altarmenischen Historikern. – “Beiträge zur Namenforschung”, № 19, S. 317–331.

Speidel M. 2002, Berserks: A history of Indo-European ‘mad warriors’. – “Journal of World History”, № 13/2, p. 253–290.

Vassilkov Y. V. 2015, Animal symbolism of warrior brotherhoods in Indian epic, history and culture. – “The volatile world of sovereignty: the Vratya problem and kingship in South Asia”. New Delhi, p. 231–253.

Vian F. 1960, Le myth de Typheé et le peroblème de ses origines orientales. – «Eléments orientaux dans la religion grecque ancienne». Paris, PUF, p. 17–37.

Vidal-Naquet P. 1986, The Black Hunter. Baltimore, London, “The John Hopkins University Press”, 392 p.

Wikander S. 1950, Sur le fonds commun indo-iranien des épopées de la Perse et de l’Inde. – “La Nouvelle Clio”, № 1, p. 310–329.

ИНДОЕВРОПЕЙСКИЕ «ЧЕРНЫЕ» ЮНОШЕСКИЕ БРАТСТВА, МИФОЛОГИЧЕСКИЕ БЛИЗНЕЦЫ И ОСНОВАНИЕ ГОРОДОВ

АРМЕН ПЕТРОСЯН

Р е з ю м е

Ключевые слова: индоевропейские юношеские братства, индоевропейская мифология, индоевропейская ономастика, армянский эпический фольклор, Армавир, Ромове, Рим.

В индоевропеистике восстанавливается существование братств юных воинов, которые под руководством наставников, занимаясь охотой и грабежами, в течение нескольких лет жили на окраинных территориях племени. Лишь после этого, пройдя ритуал инициации, молодые люди могли стать полноправными членами племени, жениться и иметь имущество. Именно этим братствам отводится ключевая роль в распространении индоевропейцев по всей Евразии. Их набеги и завоевания территорий привели к созданию там поселений, а затем к переселению туда новых групп людей, включая взрослых, женщин и детей. Отличительной особенностью юных воинов братства была связь с черным/темным цветом. И в некоторых традициях сами юнцы и их мифологические воплощения могли называться «черными», на основе индоевропейского корня *$*h_2reh_1mo$- «черный, темный цвет». Известны индоевропейские легенды об основании поселений/городов близнечными героями, выступающими в качестве мифологических персонификаций юношеских братств, притом города также могут называться «черными» на основе этого же корня. Наличие армянских, балтийских, римских и других параллелей свидетельствует об общеиндоевропейском характере данного мифа (возможно, за исключением анатолийской традиции).

Армен Петросян – д. филол. н., главный научный сотрудник отдела фольклора Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: происхождение, древняя история и культура армянского народа; древние религии и эпосы региона; индоевропейская мифология; армянский героико-эпический фольклор; лингвистика. Автор 15 книг и около 300 статей.
ORCID:0000-0002-1982-5593. alpehist@gmail.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 3

INDO-EUROPEAN "BLACK" YOUTH FRATERNITIES, MYTHOLOGICAL TWINS, AND FOUNDATION OF CITIES

ARMEN PETROSYAN

S u m m a r y

Keywords: Indo-European youth fraternities*, Indo-European mythology, Indo-European onomastics, Armenian epic folklore, Armavir, Romove, Rome.*

In Indo-European studies, the existence of fraternities of young warriors was restored; they, under the guidance of mentors, were engaged in hunting and plundering and lived in the outlying territories of the tribe for several years. Only after this, having undergone the initiation ritual, the young men could become full members of the tribe, get married, and own property. These brotherhoods played a key role in the spread of Indo-Europeans throughout Eurasia. Their raids and conquests of territories led to the establishment of settlements, and then to the resettlement of new groups of people, including adults, women and children. The distinctive feature of the young warriors of the brotherhoods was the association with black/dark color. In some traditions the young people themselves, or their mythological incarnations, could be called "black" on the basis of the Indo-European root $*h_2reh_1mo$- "black, dark color". A number of legends are known in which cities are founded by twin heroes who appear as mythological personifications of youth fraternities, moreover, the cities can also be called "black" based on the same root. The Armenian, Baltic, Roman, and other parallels attests to the pan-Indo-European nature of this myth (perhaps with the exception of Anatolian tradition).

Armen Petrosyan – Doctor of Philological Sciences, Senior Researcher at the Department of Folklore, Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences of Armenia. Scientific interests: origin, prehistory, and culture of the Armenian people; ancient religions and epics of the region, Indo-European mythology, Armenian heroic-epic folklore, linguistics. Author of 15 books and about 300 articles. ORCID:0000-0002-1982-5593. alpehist@gmail.com